


ԲԱՃԱՆԵԿԵՆ

Ի Պոլսկարիս
Տարեկ. 10 ֆր
Վեցամս. 5 "

Ոսկա համան
Իրեկ. 12 ֆր.
Վեցամս. 6 "

Վճարիկա
2 Տոյ. 30 սէնդ
ԿԱՆԻՍԻԿ



ՊԵՏԱԿԱՆ

Գրութիւնք Լ. Թ.
Հին տրուիր:

Հասցէ
DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ՅԱԲԱԹԱՅԱՆԴԵՍ · ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵԾՏՍԿԱՆ

Отговорникъ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, Адвокатъ.

Ե. ՏԱՐԻ

ՄԱՅԻՆ. 19 ՀԱՐԱԹ 1901

ԹԻՒ 212

Անցեալ հինգ շաբթի և ուրբաթ տպարանները գոց ըլլալնուն պատճառաւ «Հայելի»-ն ու «Այինէի Լէթայիֆ»-ը չկրցինք հրատարակել:

ԱԶԳԱՅԻՆ



ԿԵՆՍԱԿԱՆ ԽՆԴԻՐ ՄԸ

Հրատարակելու համար մեզ ուղղուած է հետեւեալ հեռագիրը, ուրկէ մէկ մէկ օրինակ ալ շրկուած է տեղւոյս Թաղ. Խորհուրդին և «Շարժում»-ին:

«Երեք օրինակ, բաժանի գործակատար Փենիֆաի.
«Հայելի» եւ «Շարժում» լրագրաց:

Ընթ. Թաղ. Խորհուրդ Հայոց Վառնայի.

«Որովհետեւ չի բարեհաճեցաք մինչեւ այսօր վճարել պէտք եղած օրինական տուրքը իմ գործակատարութեանս, կը յայտարարեմ ձեզ թէ ըստ պայմանագրի Փենիֆա ապահովագրական ընկերութեան գաշտաբի ընդհ. օրինաց, (տես՝ յօդուած 8րդ. Գ. պարբերութիւն) կ'ոչնչացնեմ այս վարկենէս ձեր գաշտաբները թիւ 44.16.900 եւ 44.16.901, եւ նոյն ատեն կը խնդրեմ որ բարեհաճիք վճարել ինձ երեք օրուան մէջ 168 ֆր. 20 սանդիմ (ոսկի) գումարը զոր ինձ կը պարտիք մինչեւ այսօր, (ի հաշիւ եկեղեցւոյ եւ առաջնորդարանի ապահովագրութեան) հակառակ պարագային պիտի ստիպուիմ զիմեւ ուս որ անկ է:

Գործակատար Փենիֆաի
ՄԱՎԻ

Վառնա
18 | 4 Մայիս 1901

Հայելի. — Վերոգրեալ հեռագրէն կը հասկցուի թէ տեղւոյս Թաղ. Խորհուրդը եկեղեցիին եւ Առաջնորդարանին (վարժարան) ապահովագրական տուրքը մինչեւ ցարդ չէ վճարած եւ 18 | 4 Մայիսէն ի վեր ազգային սոյն երկու հաստատութիւնք հրեւհի արկածի գէմ անապահով վիճակի մը մէջ են: Զարմանօք տեղեկաւորք նաեւ թէ Թաղ. Խորհուրդը հակառակ ապահովագրական օրինաց, տարի ու կէսէ քի վեր չէ վճարած սոյն տուրքը որուն պատճառաւ այսօր ծանր պատասխանատուութեան տակ կ'ը գտնուի հանդէպ ընդհ. ազգին:

ՏԱՐԵԴԱՐԶ ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՅԻ

Անցեալ հինգ շաբթի Համբարձման տօնին առթիւ Հիւանդանոցի մատրան մէջ Ս. Պատրիարքը պատարագեր և յաւարտ եկեղեցական արարողութեանց, նորաշէն տաղաւարին մէջ 100ի մօտ անձանց (մեծու մասամբ կղերական) սեղան մը տրուել է: Պատրիարքը ըստ սովորութեան Ա. բաժակը առաջարկել է կայսեր կենացը. յետոյ Կրօն. Ժողովոյ ատենապետ Տ. Գրիգորիս Արք. բաժակ առաջարկել է Վեհափառ Հայրապետին կենաց, և փոխանակ աղգային երգերու կոմ նուագի՝ եկեղեցական հայրերը էջ Միածինն ի Հօրէ շարականը կարգացել են: Պատրիարքական փոխանորդ Տ. Գաբրիէլ սրբազանն ալ բաժակ առաջարկել է Երուսաղէմի Տ. Յարութիւն Պատրիարքին կենացը, որուն եկեղեցական հարք պատասխաններ են Լուսւորեա եւ Ռուսաղեմ զի հասեալ է լոյս քո շարականով, ու երբ Տ. Գէորգ Եղեցեան սրբազան բաժակ առաջարկել է Պալոյ Պատրիարքին կենացը, եկեղեցականք Հրաշափառ Աստուած շարականով պա-

տասխաններ են. այս հաշվով սեղանին վրայ աւելի շարական ճաշակուեր է քան թէ կերակուեր: Աշխարհականաց կողմէ ոչ երգ և ոչ ալ ատենախօսութիւն չէ եղած, ինչպէս նաև նուագ չէ զարնուած:

Բոժ. — Շնորհիւ բարեխնամ կառավարութեան, բոլոր հպատակ հասարակութիւնք ազատ են իրենց ազգային տօնը... չուզածնուն պէս կատարելու:

— Վեհափառ Հայրապետը 200 բուպլի նուիրեր է Ազգ. Հիւանդանոցին:

— Նիւ Եորքի Որբախնամ մարմինը 80 ոսկիի գումար մը շնորհած է Պատրիարքարան և մի քանի նոր որբերու պաշտպանութիւնը ստանձնելու տրամադրութիւնն յայտնած է: Նպաստից Յանձնաժողովը իր վերջին նստին մէջ որոշեր է օրհնութեան և քաջալերական գիր մը յղել նոյն մարմնոյն:

— Յովհաննէս էֆ. Յակոբեան գաւառական Որբանոցներու մէջ գտնուող տղայոց զգեստ շինելու համար ասուի նուիրած է:

— Ազգ. Հիւանդանոցի Որանոցին արհեստական ճիւղէն մէկ քանի ընթացաւարտներ իրենց անգրանիկ շահէն 6 լիւր յանձներ են Ս. Պատրիարքին, իրենց պէս գաւառացի աղքատ տղաքներուն համար:

— Աթէնքի Հայկական եկեղեցւոյ հոգաբարձութիւնը կարգաւոյժ Աթանասի շահատակութիւնները տեղեկագրած էր Պատրիարքարան: Կրօն. ժողովը որոշեց հաղորդել տալ տեղւոյն կառավարութեան թէ՛ յիշեալ Աթանաս կարգաւոյժ հրօշակուած է:

Անցեալ շաբթու քաղաքէս մեզ զրկուած ութը համակրական քարթերու փոխարէն մեր շնորհակալութիւնը կը յայտնենք:

Զ Ե Կ Ո Յ Ց

Նկատելով որ կարգ մը բաժանորդներ հակառակ իրենց խօստմանց տակաւին խիղճ չեն ըներ պարտքերնին վճարելու, և նկատելով որ մենք չենք կրնար քաղքէ քաղաք պտտելով բաժնեգին հաւաքել, որ մեր համեստ պիտոճէին անվայել և աւելորդ ծախք մը պիտի պատճառէ և անոր հաւասարակշռութիւնը կորսնցնէ, ուստի այսօրէն սկսեալ կը դադարեցնենք անանկներուն թերթ շրկելը: Այս դադարեցումէն առաջ գալիք բաժանորդաց թուոյն պակսելովը մեր պիտ-

ճէին տարեկան 400 ֆրանքի ըացը գոցելու համար ալ պիտի ստիպուինք ուրիշ կերպ կարգադրութիւն մը ընելու:

ՆԱՄԱԿ ԽՄԱՅՐՈՒԹԵԱՆ

Սօֆիա 13 Մայիս 1901

... Տիար Խմբագիր

Նկատելով որ առաջին օրէն ձեր թերթի ուղղութիւնը եղած է միշտ ձաղկել ու մատնանշել այն ամեն զեղծութիւններն ու թերութիւնները որոնք Ազգին պատուոյն և շահին վնասելու հանգամանք ունին, կուգամ խնդրել Պատ. Խմբագրութենէդ որ բարեհաճի յանուն Ազգային իրաւանց ներկայս ասպնչականել թերթիդ ամենաժառ թիւերէն մէկուն մէջ:

Տեղոյս Ազգ. եկեւե վարժարանին ի նպաստ Ապրիլ 29 ի գիշեր ներկայացում մը տրուեցաւ բայց միշտ չեւ ցարդ ոչ ոք գիտէ թէ որչափ հասոյթ եղած է, վասնզի այն խղճամիա պարոնները որոնք ժողովուրդին ցրուելու համար բաւական թուով տոմսակներ առած են, տակաւին ո՛չ դրամները յանձնած են եւ ոչ ալ չի ծախուած տոմսերը վերադարձուցած են, ոմանք ալ Ազգէն վաղուց ունեցած պահանջներնուն հաշուած են: Կ'երեւայ թէ այդ պարոնները օգտուել կուզեն հոգաբարձութեան աս տեսակ բաներու մէջ ունեցած անփորձութենէն, բայց ժողովուրդին ձայնը ու օրէնքը չի պիտի թողու որ ամեն ոք իւր ուղածին պէս շարժի ու վարժարանին անուամբ հաւաքուած դրամը իւր նպատակէն շեղի վասնզի ժողովուրդը հիմա կը գուրգուրայ իր մէկ հատիկ վարժարանին վրայ ու երախտապարտ կզգայ զինքը հանդէպ արդի ուսուցչուհի Օր. Է. Գոնչէկիւեանի, որ կրցաւ շատ կարճ ժամանակի մը մէջ մեր նախկին խամբոցը նախանձելի մանկապարտեզի մը վերանշել, հետեւաբար ժողովուրդը շուզեր որ իր անկեղծ աշխատւորները իրենց նախորդներուն պէս նիւթական աննախանձելի վիճակի մը մատնուին ու վերջապէս կառավարութեան միջամտութիւնը խնդրեն: Ուստի այս մտածումներով ժողովուրդը սիրայօժար կրկնապատիկ գին վճարեց շատ պարզ կատակերութեան մը, առաջ իւր բաղձանքին ալ հանելու, վասնզի պաշտօնէից ամսականները դեռ անվճար կը քնան կըսուի, բայց չեմ յուսար որ այս խնդրին ալ կառավարութեան ձեռքով կարգադրելու տեղի տրուի, վասնզի Ազգէն աւելի իրենց պատիւը թող մտածեն:

Վ. Մ

Գ Ա Ի Ա Ռ Ա Կ Ա Ն

(Գեղանեմ զգնուած նամակ մը)

Սեփաստիա 1901 Յունվ. 10

Սիրելի օրգուս Սաղկոյի բարեւ և հարական
սէր և օւթնութիւն

Կամիս թարաֆա հարցնես կու՝ մեզուրս,
քեռիներդ, էմիւզ և նինէզ, մարդ աղբրտան-
քդ, հարսները, Սիրապը Խուկասը գուռ դրացին
բարեւեն կը:

Խրկած գիրդ եաւ մեզ հասաւ օր դրեր էյիր
քի չօրպաճուս քովէն եւայ կիւմրիւկը սրբիս
համալութեան գըրուեցայ ու իրեք ամիս է
միւլալիմ պէքլէմիշ անիմ կը, օն պաշիուն վեց
լիրա տըվերես քի թէզ անցնէ քեզ սրբիւր: Տը-
ղաս, չորս տարի կանէ գնացիր ես տահա սրբիս
մը ճօթ չի կըցիր էիր բռներ. Փաթըռիկցի երե-
մը թարաֆըս եաւ, մեր վրայ խօսի կու. իրեք
օսկի առիւր քաղաքը Մարդօ աղայէն գնացիր և
սէնէթը իմ իմզայով ըլլալուն իրեք հեզ էզաւ
կուգայ ֆայիզը ֆայիզին վրայ զարնէ կը, հիմէկ
տասնըմէկ օսկիի սէնէթ մի տըվի և անդի երեսի
արտն ալ ըռեհին, քէսէն քսանը հին խուռուշ
ֆայիզի կապեցի և տարի գլխու 660, երկու
քէսէն մէկ լիրաին ֆայիզը անէ կը, չի խրկես
նը արտը կէրթայ կը ձեռքէ. էկէր քի չօրպա-
ճուգմէ առնելիք ունիս նը՝ երեմէն հինգ լիրա
առի և եզանը թէք մի առի աման աման հոտ
տաս, եզը չէ նը երթայ կը ձեռքէ, և հետը
չիթթ մի թօլլուխ և չիթթ մի չօրպա ու երկու
հոտ լան չէրիտ խրկեցի, սրբիս մտնես նը
թօլլուխին վրայ փաթէ չէրիտը քի ճռներդ
սրբիւր մնայ:

Հայրդ Սիրապ

Բոժ. — Սիրապ լայն չէրիտը փոխանակ վաւկնուգ
դրկելու, տարէք ձեր արիւնը ծծող անխիղճ
սարաֆներուն վիզը անցուցէք որ ինքզինքնին
կախելով մէկ ձայնով ազատին, վասն զի ձեզ
նման շատերուն անէծքն ու վայը առնելուն
պատճառաւ չպիտի կրնան դիւրութեամբ հոգի տալ
և շատ պիտի քաշեն:

ՏՈՒԹՈՐՆ ԵՒ ԳԵՂԵՑԻԿ ՍԵՌԷՆ ԳՈՂ ՄԸ

Բարիցի Տոթոր մը իր խորհրդակցութեան սեն-
եակը նստած, յաճախորդի կապսէր, երբ գանգակը
գարնուելով, ներս մտան չէնք շնորհք հագուած երի-
տասարդ մը, բաւական տարիքոտ կին մը, որուն կընկե-
քանար նաեւ գեղանի եւ սիրուն աղջիկ մը: Արու այ-

դիւն ինքզինքը ներկայացուց իբրեւ մարքիզ մը, որ այս
ինչ թիւ տունը կը բնակի, հանրածանօթ փողոցի մը
մէջ, եւ ըսաւ թէ իրմէ տարիքոտ երեւցող կինն ալ իր
տիկինն էր, եւ գեղեցիկ օրիորդն ալ իր աղջիկը: Աս-
կից անկից քանի մը բաղաբաժնական խօսքեր եղան,
եւ ապա կարծեցեալ մարքիզը տոթորն անկին մը տա-
նելով կամաց եւ գաղտնապահ ձայնով մը սկսաւ հե-
տեւեալ պատմութիւնն ընել անոր: Իր գուստըն աղուոր
աղջիկ մ'էր, ըսաւ, շատ սիրուն է, ինչպէս ինքն ալ
կը տեսնէ, կատարեալ աղջիկ մ'էր, բարեբաղոյ, հա-
մեսա, եւ երբ կարգուի, պատկուելի օժիտ մ'ալ պիտի
ունենայ, որովհետեւ, փառք Աստուծոյ, իր ծնոյք զուրկ
չ'էն աշխարհային բարիքներէ: Գոթախտաբար, ըսաւ,
այս փայլուն պատկերին վրայ սեւ կէտ մը կայ, ա՛յն է
թէ աղջիկը բան գողնալու մոլութիւն մ'ունի, տեսակ մը
հիւանդութիւն: Խանութ մը մտածին պէս առջի գործը
կըլլայ բան մը վերցնել, իրենց բարեկամներուն գգալ-
ներն ու պատառաքողներն անգամ չեն աղատիր անոր
խիստ յանգուսն ճիրաններէն: Յետոյ բուն կէտին գա-
լով, կարծեցեալ մարքիզն հարցուց տոթորին թէ այս
հիւանդութեան դարմանը չըլլար: Ծախքէ չի բաշուիր
բնաւ, եւ ըսածն հաստատելու համար գրպանէն դէզ մը
պանքնօք հանելով տոթորին գրասեղանին վրայ դրաւ:
Բռնիչը մարքիզին... միամտութիւնն ու գործին շահա-
ւորութիւնն ալ տեսնելով, իսկոյն հաւանեցաւ դարմա-
նել աղջիկը ժամանակ մը իր տան հիւանդանոցին մէջ:
Երկրորդ օրն աղջիկն եկաւ իր բնակութիւնն հաստա-
տեց տոթորին հիւանդանոցին մէջ սպասուհիի մը հետ,
ամէն ծախք իր ծնոյքը պիտի ընէին, եւ մասնաւոր
դարման պիտի տարուէր անոր: Չորս—հինգ օր տոթոր-
ըն իբնօրիգմի (քնածութիւն) դարման ըրաւ անոր, եւ
իր մէթոտին վրայ շատ ուրախ էր, որովհետեւ կը տես-
նէր թէ տունէն բան մը չէր պակսած աղջկան գալէն ի
վեր: Սակայն երբ իր այցելութիւններէն տուն դարձաւ,
ապշեցաւ մնաց տեսնելով որ իր... թռչունները թռեր
են, բայց ասոնց թռչիլը բան մը չէր բաղաւտածը
խեղճ տոթորին 1000 անգլ. ոսկի արժողութեամբ
պանքնօղներուն եւ 400 ոսկիի ալ զանազան արժէքա-
ւոր առարկաներուն թռչելուն: Տոթորն ինքզինքը մխի-
թարեց խորհելով թէ գող—հիւանդ աղջկան ազնուա-
կան հօրը տունը կերթայ եւ կը փոխարինուի: Ուստի
փութաց թիւը ծանօթ տունը, բայց... չգտաւ, շատ
փնտոց չգտաւ, եւ գտաւ միայն որ երեք յանգուսն
եւ արհեստէն եղող խաբէբաներու գոհ եղեր է: Տոթ-
որը շունչն առաւ իսկոյն պահանջեց, եւ հիմա
գաղտնի ոստիկաններ չորս կողմ ինկած Բարիզն իրար
կանցընեն մարքիզը, մարքիզուհին եւ գեղանի օրիորդը
գտնելու համար:

ԶԱՆԱԶԱՆՔ

ՄԱՆԿԱԹԵԱՆ ՅՈՒՑՆԱՆԻՍԸ. — Ի Բարիդ. Բդի Բալէի մէջ բացուած է այս պահուս զարհանալի ցուցահանգէս մը: Մանկութիւնն հետաքրքրող ամէն առարկաներ, հին յիշատակներ, պատկերի, ծաղիկի, մանրանկարի պաճուճապատանքի, որրանի, մարմարիոնի, թրծուն աղիւսի ևն. ևն. ձեռք, հաւաքածոյ կազմած են այդչքեղ պալատին մէջ: Հոն ցուցադրուած է էօթէնի կայսրուհիին կողմէ Բարիդի քաղաքապետութեան նուիրուած պատմական որրանը, որուն մէջ երբեմն մշիկ մշիկ կը քննար նաբուէոնեան Ֆրանսայի ժառանգը, էօթէնի կայսրուհիին միակ զաւակը, որ Զուլուներէն սպաննուեցաւ: Ամէն օր հետաքրքրեցնելու ամբոխ մը Բդի Բալէ կը դիմէ: Մանկութեան Գեղարուեստներուն վերայ հիանալու, և գիտելու թէ մարդկութիւնն ինչեր ստեղծած, հնարած է, մանկութիւնը գրգռելու, խնամելու, զուարճացնելու և հրահանգելու համար: Ճշմարիտ մուսէոն մը է այն տաղչին կարգի խաղալիքներու, ամենագեղեցիկ նկարներու և պատմական նշխարներու: Բայց արդի ժամանակաց Մանկութեան կամ լոկ եւրոպական Մանկութեան գեղարուեստից մուսէոնը չէ այն: Հոն ներկայացուած են հին ժամանակներու և ամէնէն տարբեր ցեղերու Մանկութեան հրաշալիքները: Զինական, ճաբոնական գլուխ գործոցներ ալ կան հոն:

Վեհապետներու մէջ ամէնէն շատ նամակ կ'ընդունի Պապը: Ամէն օր 22էն 25 հազար նամակ և լրագիր կը հասնի Վատիկան: Ասոնք կարգադրելու համար 35 քարտուղար և դպիշ կը գործածուին: Պապը ամէնէն կարեւոր նամակները միայն կը կարդայ: Մ. Նահանգներու նախագահը գրեթէ 140) նամակ և 3-4000 լրագիր և գիրք կը ստանայ ամէն օր: Անգլիոյ թագաւորը օրը 1000 նամակ և 2-300) գիրք և լրագիր կ'ընդունի: Վիլհելմ Բ. ի սուրհանդակը օրը 1000 նամակ և 3-4000 լրագիր և գիրք կը բերէ բայց կայսրը ապահովագրուած նամակները միայն կը բանայ: Ասկէ զատ ինք իր բերնովը քարտուղարներուն գրեւ կուտայ անոնց պատասխանները, և ամէն նամակ իր ձեռքով կ'ստորագրէ: Զարը օրը հազիւ 600 նամակ կը ստանայ: Իտալիոյ թագաւորը 300 նամակ կ'ունէ ամէն օր: Վերջապէս Վիլհելմինա թագուհին օրը 100-150 նամակ կ'ընդունի:

Հաւկիթ մը, որ 2000 ոսկի կ'արժէ. — 1889էն, այսինքն Աւստրիոյ գահաժառանգին մահէն ի վեր լէոն ԺԳ. Պապը ամէն տարի Զատիկին հաւկիթ մը նուէր կը ստանայ, որուն կեղեւը փշուկի չորս կտորներով պատուած է: Հաւկիթը դիւրաւ կը բացուի: Մէջը կը գտնուի խոշոր ագամանդ մը, թանկագին քարերով, սուտակով, զմրուստով եւ կարկեհանով դրուագուած: Այս հաւկիթը 2000 Անգլ. ոսկի կ'արժէ: Նուէրը Վիլհելմինա կը շրջակուի, բայց զրկուին անունը անծանօթ է: Վիլհելմայի ազնուապետական շրջանակներուն մէջ կը պատմուի թէ նախնապետն Հունգարացի հանրածանօթ կոմսուհի մըն է, որ ներկայ գտնուած է Յէյէրլինկի տաճին:

ՓԱՍՏԱՐԱՆԱԿԱՆ

Փաստաբանը նստած է իր գրասենեակը: Յաճախորդ մը կուգայ խորհուրդ հարցնել անոր ու կը պարզէ իւր դատը: — Պարոն փաստաբան, գրացի մը ունիմ որուն հետ սրգողեցայ վէճի մը պատճառով: Հաւերէս քանի մը հաար մտեր են իր պարտեղը ու ան ալ զանոնք թունաւորեր է: Կրնամ դատարան դիմել անոր դէմ:

— Անշուշտ, քանի որ անիկա մեռցուցեր է քու հաւերդ, և ան ալ կանխամտածութեամբ, ըսել է գործդ կարգին է, ձայն մի հաներ: Ինծի անիշտպէս արտօնութուլթ մը չըլէ և սկսինք հետապնդումները:

Յաճախորդը գոհ սրտով կը մեկնի: Իէս ժամ վերջը ուրիշ յաճախորդ մը կուգայ, որ նոյնպէս խորհուրդ կը հարցնէ մեր նշանաւոր փաստաբանին:

— Պարոն, գրացիիս հետ կուռեցայ, պատճառը սա է որ իր հաւերը յաճախ կուգան իմ պարտէջս և ցանուած տունկերը կ'աւրչտին: Ասոնց առաջը առնելու համար թունաւորան գնտիկներ (հապ) շինեցի ու տուի որ մեռնին ինչպէս, իրաւունք չունիմ:

— Անտարակոյ: Դրացիդ ամենեւին իրաւունք չունի իր հաւերը քու պարտէջդ մոցնելու: Յետոյ, դուն բոլորովին աղատ ես քու պարտէջիդ մէջ թունաւոր գնտիկներ նետելու: Ինք կատարելապէս չէիք գիտեր թէ անոր հաւերը պատին վրայէն պիտի անցնին ու ձեր պարտէջը պիտի մտնեն: Ուրեմն անիկա ձեզի ինչ ինչ վնասներ պատճառած է որոնց համար ամեն պարագայի մէջ պատասխանատու է: Գործդ ալէկ է, ձայն մի հաներ: Արտօնութուլթ մը չըլէ որ հետապնդումները սկսինք:

ՃԵՂԵՊԻՐ

(Ամսան Բոժոժիկի Ընկ.)

Վառնա

Խաթմեդի աշուրնիս լոյս, տուրիման տաճար-
չացաւ:

1. Հնչակեան.
2. Վերակազմեալ Հնչակեան.
3. Վեր-Վերակազմեալ Հնչակեան.
4. Դաշնակցական.
5. Արմենական.
6. Առնաժողովո-Հայկական.
7. Միութենական.
8. Հայկական յեղափոխական.
9. Մահ Դաւաճանացեան.
10. Սոցիալիզմական.
11. Ժողովրդային միութենական.
12. Հայկական միութենական:

Բոժ.—Հիմա, ասանկ անհամերաշխ, զիրար
նախատող ու հալածող 12 վաշտերէ բաղկացեալ
ալաքէյֆինէական բանակով մը կարելի չէ՝ հայ-
րենիքը աղատել ըսելը՝ պարզապէս խենդու-
թիւն է, խենդութիւն...

Սլիվէն

Ժուռնալ տը Սարսնթըյին Սօֆիայի անցած
տարուան թղթակիցը որ պաշտօնանկ եղած է,
այժմ քաղքէ քաղաք և կայարանէ կայարան կը
պտտի՝ հանգանակութիւն ընելու ի նպաստ իր
պատկանած կուսակցութեան, ու թէ և ան աս
համոզելու համար «ուրիշ տեղերէ շատ առատ
առատ նպաստներ ստացայ» կըսէ, բայց կլնող չի
կայ, ամենէն ալ «ոչ կարեմք և ոչ ճանաչեմք
զձեզ» պատասխանը առած՝ պոչին վրայ նայե-
լով ետ կը դառնալ:

Կ. Պոլիս

Հիւանդանոցի տարեգ. արձը այս տարի առանց
երգի և նուագի՝ շարականներով անցուցինք, գալ
տարի ալ եկեցեցեով պիտի տօնենք:

Պուա տը Բէյնիրճի

Սքանչելի զիյաֆէթ մը տրուեցաւ «ճան
ճիւղի դուզու-սարմասիական» մէթոտով, Օրուան
քառօրին էր՝ «թի՛նաքանիս, հոգիս, ըզվինչ,
մինչ»։ Զիաֆէթական, յուսալից էին թէ մին-
չև վերջը շատ աղէկ ժամանակ պիտի անցունեն,
բայց բնութիւնն իսկ նախանձեցաւ, յանկարծ
սկսաւ անձրեւել ու ամեն բան տակնուվրայ ը-
րաւ: Անձրեւէն պատսպարուելու խուճապին մէջ
յանդուգն պարոն մը առիթէն օգտուելով ուզեց

աճէլէ թէրթիպ իր շրթունքը օրիորդ Մանիչա-
կի ականջին մօտեցնել, բայց շառաջաձայն ապ-
տակով մը ետ մղուեցաւ: (Անցած ըլլայ):

Ուլիցա Գարմագարը

Տան մը մէջ կատարուած նշանոտութեան հան-
դէսը գիտելու համար դրացի երիտասարդը և
կուսանք իրարու շալակ ելած պատահաններէն
վեր մագլցեցան:

Թոնքին

Պարոն Կակոս որ տարուան մը փեսայ է,
անցեալ շաբթու զաւակ մը ունեցաւ, բայց տես-
նելով որ նորածինը ոչ իրեն, ոչ մօրը և ոչ ալ
ծուռ ու մուռ կնքահօրը չի նմանիր, բարկու-
թենէն զորանչը ծեծեց:

Պալըզ բազար

Գաւառացի գործաւոր երիտասարդ մը որ
ձեռքը 40 ֆրանք ունէր, իր կարծեցեալ բարե-
կամին՝ Քարտուկենց Մելիքոն աղային դիմեց որ-
պէս զի անոր միջոցաւ դրացի հանդերձավաճա-
ռէն ձեռք մը հագուտ առնէ: Մեր Մելիքոն
աղայն իր հաւատարիմ բարեկամ մը եղած ըլ-
լալը այս առուտութիւն մէջ ալ ցոյց տուաւ՝ 40
ֆրանքին 5ը խանութ կամ խանիկն ընելով:

Մուսալլա

Երկնային վիճակին օրը խումբ մը զուար-
ճասէր պարոններ սրճարանի մը մէջ հաւաք-
ուած՝ առ ի չգոյէ աւանդական կուժի պէտպէ-
րական շէնհէնիկ միջոցաւ վիճակ հանեցին:

Մանրամասնութիւնք թղթատարով:

Ն Ս Ո Յ Ժ Ս Ը

ՏԵՂԱԿԱՆ ՀԻՆ ԲԱՐՔԵՐՈՒ

Կիրակի օր մըն է: Մուսալլայի հրապարակի
սրճարաններէ մէկուն մէջ կը հաւաքուէին տասը
քսան անձինք, որոնք մածունի սկուտեղէ (քեա-
սէ) քիչ մը պղտիկ վաւաթներով սուրճերին
խմած ատեն, ընդհանրապէս հետեւեալ խօսակցու-
թեամբ ժամանակին կանցունէին:

—Պրագ ալլահընը սէվէրսէն պէ, պու պիր
գաչ սէնէլէր՝ պիղիմ պաղլարա չօգ զիյան վէրտի.
եաղմուրարըն էսէրինի տահա ունութեամբաճադ-
լար չօթուգլար:

—Սէն տէ օնու տէյօրուտն պէ Դօփօշ. կէչէն
կիւն պատեա կիթտիմ, պիւլթիւն սէլ կէթիրմիշ
պաղըն իչինէ թաշ տօլտուրմուշ. իքի իւշ կիւն
չալըշտըմ ամա զօր տըշարը թաշտըմ թաշարը.
ճանըմ պուղաղըմ կէլտի. կէօպէյիմ չաթլատը:

—Օ տէյիլ ամա, սէն էչէյի նէ՝ եաբտըն
պէ Դիրգոր:

—Այս պէս պու գըշըն օնա օթ մու եկեթիշտի. սաթտըմ պէ, պաշըմը պէլայա օլրաթուճագտը. ազ գալտը կէշէն սէնէ գօմշուճուղուն պաղընա կիրմիշ պիւթիւն չօթուգլարը եէյէճէք իմիշ:

—Էօյլէ ամա, օ քէնտի եէմ բարասընը չըգարըրտը, եազըն մէյվանը սըրթըլա թաշըր ըտը, հիշ օ սաթըլըր հայվա՛ն մըյըտը պէ:

—Տօլրուսունու սէօյլէյիմ մի, էշի պուրալարտա պուլունաճագ կիպի տէյի տիր. ֆագաթ մասրաֆը չօգ պէ գարտաշ. հէր սէնէ տէ քըրըտըրմալը:

—Պէ հօլան, օնուն լագրտըսը մը օլուր:

—Գօգօշ, սէն նա՛սըլ եաբտըն եա պէ, էշէյի գըրբտըրտըն մը:

—Պրա՛գ մէմէճիինէ գուստուղումունու պէ, տուրմայօր քի, մասրաֆ օլմասըն տէյի քէնտիմ քէմէյէ իսթէտիմ ա՛մա՝ օլմատը:

—Էյ նէ՛ եաբտըն եա պէ:

—Աշատան նալպանտըն պիրիինի չաղըրտըմ, իքի քիշի զօր հալ իլէ՛ պիրիմիլ քույրուղունտան պիրիմիլ պաշընտան եազալատըգտա եէրէ տէվիրտիք. եօգսա միւմքիւնիւ եօգ պէ, միւմքիւնիւ եօգ:

—Է, քըրբտըն մը պաարի:

—Նէ՛ եաբաճամ եա՛, տմա պիր պուշուգ ֆըրանկըմը եազտը:

—Սանա քիմ տէյօր քի հէր կիւն օնու սրբայըլա պէսլէյէսին. պիր բարչա սաման եէթմէմիշ մի օնա, պիւմէմիսին պէ, թագուշ ապլանըն էշէյի գօճա գըշըն պիր կաղ սանտըղը քէմիւմէյիլէն կէշիրտի:

—Էօյլէ տէյօրուն ամա պէ գարտաշ, էօյլէ պէսլէմէսէն սօնրա տա արապայա գօշուլմազ. հէմ պանա պա՛գ, պէն օ սէնին գօմշունուն պաշընա պիր կիւն ֆէնա պիր շէյ կէթիւրէճէմ, պէ գարտաշ, պաղըն իշինտէ պիր շէյ պրագմայօրլար պէ՛:

—Նէ՛ օլուր պէ ճանըմ, սէնէտէ պիր տէֆա, պիր սալըմ իւզիւմ քօբարըրլար ըմըշ, օնունտա լաքըրտըսը մը օլուր:

—Նէ պիր տէֆասը պէ, քիրէզ վագթը քիրէզինի, արմութ վագթը արմութունու, իւզիւմ վագթը իւզիւմիւնի, իլէ օ շէֆթէլիլէրի հիշ պրագմայօրլար պէ, թէ կէշէն կիւն Ավանէս տէ աննատըյօր ըտը ետ պարտաք էրիքլէրինի հիշ պրագմաղլար ըմըշ, հէմ տէ պիր գաշ քէրէ տէ ֆիտանընը իսթէմիշ ալմըշլար, նէ տէտին պէ Ավանէս:

—Պիր կիւն պիր սօմանա եաբաճազ ամա պաղալըմ հանլը կիւն օլաճագ: Օրատա պիր քէօշի եաբմըշլար էլին աալէմէն պաղլարընլան

օրթաք օլմուշլար. պէ գարտաշ պու չէքիլիւր շէյ մի, ճաա՛ր ու սէ:

—Նէ ճաա՛ր ու սէսի, պէ, քէնճ ու տիւ օյնա. էօյլէ եա, սէնինտէ իշինէ կէլիյօր լաֆաթութուպ իսթէտիյինի օյնամայա: Սէն էօնիւնէ պագսանա պէ ճանըմ, աալէմին պաղ լագըրտըսընա նէ գարըշլարսուն:

—Նասը գարըշմայըմ պէ, ճանըմ եանըյօր. հէր վագթը տըր պու. պէն օլլումլան ու. չաղըլմամ եէեէմէզմիյտիմ օնու, հէմ սէն կէշէն սէնէ չալուշլարընը պիւթիւն Գօթի կիլ թօփլամըշ տէյի, քէնաինի եէյէճէքտին:

—Օ պաշգա պէ, հիշ Ասվաազին կիւնիւ ժամա իւզիւմ կէօթիւրէմէտիմ. օնուն իշինէ գըղտըմ:

—Թէ պէնիմ տէ սէպէպիմ վար ըտը. պըրըշբայլան պաաեա կիթտիմ պիր քէֆ եաբմայա, էրիք հիշ պուլամատըմ, օ կիւճիւմ, կիթտի:

—Հատի, օլունունա պաք պէ պըրտգընշունու պէ Գօգօշ:

—Պիլ օնա լաֆ էթ տէմէտիք եա պէ. աննաթսանա պէ թագօր:

—Նէ սէօյլէյիմ պէ, ալէմին իշինէ նէ գարըշլարմ. տիւնեա ֆէնա օլմուշ:

—Նասըլ պաաեա քիզլէտի՛ն մի պէ Սահակ աղա:

—Օ իշի տահա պէն կէշէն հաֆթա պիթիրտիմ պէ. պու սէնէ էկեր ալլահ վէրիսէ հէֆէյիճէ մահսուլ ումույօրուլ:

—Աման պիր բարչա կէօղիւմիւղ աշըլըն պէ գարտաշ, աման, զէրէ պէօյլէ կիտերսէ իշիմիլ քէք եաման տըր:

Պու սըրտաա գաբուտան իշէրի ուղուն պօյլու պիրիսի կիրտի, վէ—Բարիլիյս սեզ, տէյիպ օթուրտուքտան սօնրա,

—Պանա պիր քա՛վէ, օամանլը ֆիլճանընլա:

—Իյի սա՛րսըն մը:

—Օամանլը տէտիք եա պէ:

(Տէպլալի)

ԷՄԷ—ԺՈՒՊԷՐ

ԹԱՏՐՈՆ ՊՕՐԻՍ

Վառիքիե իւնքին կողմէ

ԱՅՈ ԳԻՇԵՐ.—«Որտորգը» միշկատակալաղ 5 արար, կօշկակար Ապտի գօմէտի 1 արար թուրքերէն լեզուաւ:

ՎԱՂԸ ԳԻՇԵՐ.—«Տալէլի Աւազակապետը» 5 արար, «Մօրուսաւոր հարսը» գօմէտի 2 արար թուրքերէն լեզուաւ:

Պարերգք Տ. Գ. Յակոբեանի, Օր. Զօիցաթի և Օր. Մարիգայի կողմէ:

Գին սովորական:

ԹԵՐԹՈՆ «ՀԱՅԵԼԻ» (19)

ՌԷՆԷ ՏԸ ԲՕՆ ԺԷ

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐՈՒ ԳԵՏԸ

(ԳԱՐՄԱՐ-ՄԱՄՈՒՅԸ)



Այն որ կառաջնորդէր այդ տարօրինակ խումբին, բաշեց այն նաւակներէն մէկը և ստուգելէ յետոյ թիւակներու գոյութիւնը, մէջը մտցուց իր ընկերները. յետոյ, կտրելով խորիսխը՝ թեւակի ուժեղ հարուածով մը բացը հանեց մակոյկը:

Հոսանքը վարար էր: Բայց և այնպէս առեանգիչները բաւական շուտ հասան գիմացի եղերքը, ուր ջուրներն աւելի հանդարտ էին:

Հոն, Մարգարիտներու գետը երեք մեծ բազուկներու կը բաժնուի որոց երկուքը միայն նաւարկելի են և Պօքթա—Թիկրիսի ամրոցներուն վերեւ ծովը կը թափին: Երրորդը, ժայռերով ու խութերով ծածկուած, իր ընթացքին մէջ ընդհատուած է նաև սահանքով մը որուն գոռիւնները, արձագանգներէն կրկնուելով, երեք չորս մղոն հեռուէն կը լսուէին:

Գէպի այս վտանգաւոր բազուկն ուղղուած էին սակայն նաւազները, բայց հազիւ տասը վայրկեանէ իվեր կը նաւարկէին հոն, հրա զեկաժարը աղաղակ մը արձակեց որ խաբուելու աստիճան կը նմանէր կուսմալա թռչունին աղալակին:

Համանման աղաղակ մը պատասխանեց իրեն, և մարդ մը երեցաւ այն ժայռին վրայ ուր կերթային փըշրուիլ ջուրերը: Նաւաւարները վեր առին թիւակները և մակոյկը խրեցաւ գետեզրին վրայ:

—Դո՞ն ես Վուսթի, հարցուց այն անձը որ կարծես ջուրին մէջէն դուրս ելած էր յանգարծ:

—Ես եմ, վարպետ, պատասխանեց ձկնորսը:

—Եղա՞ր:

—Այո, կինը հոս է:

—Ուրեմն գործի սկսեցէք դուք:

Այս բառերը կ'ուղղուէին տասներկուքի չափ անձերու որոց գլուխն հազիւ կը նշմարուէր բարձր խոտերուն վերեւէն:

Յայտնապէս կը սպասէին այդ տրուած հրամանին, վասն զի անմիջապէս գետակին մէջ իջան, ուր անոնցմէ շատերը մինչև ուսերնին անհետ եղան և ամենախորին մթութեան մէջ սկսան գործի մը որուն նպատակը անկարելի էր գուշակել:

Երեք առ երեք խմբակներու բաժնուած, բանած էին խարսխանչերու կապուած ամուր չուաններու ծայրերը, և իրենց ճիգերը կը միացնէին վեր առնելու համար առարկայ մը որ գետին յատակը մնացած կ'երևէր:

Արդարև շատ չանցած այս անձանթ առարկան դուրս ելաւ իր թագուն ապաստանարանէն:

Երկար մակոյկ մըն էր կարմրաներկ ինչպէս իր թիւակները. նաւարչաւի կամ ծովահենի մակոյկ, վասն զի իր առաջակողմը սաստիկ բարակ էր և քսան թիւավարի համար տեղ կար:

Կողերէն մէկուն վրայ բացւող կափարիչի մը միջոցով մէկ վայրկեանի մէջ կարելի էր ընկղմել զայն, հետևապէս գերծ պահել ամեն խուզարկութենէ:

Քանի մը վայրկեանի մէջ քստմնելի աշխատողները վեր առին մակոյկը այնքան շուտ որ մէջի ջուրը պարպուի, գոցեցին կափարիչը, լողացուցին զայն և իրենց տեղերը նստան:

Վուսթի հոն փոխադրած էր Վարդը որ միշտ ամրապէս կաշկանդուած, բայց երեսը ծածկող կերպասէն ազատուած, զարհուրագին ակնարկով կը հետեւէր այդ տարօրինակ տեսարանին:

Յանկարծ մակոյկը ցնցուեցաւ բուռն բախումէ մը: Այն մարդը զոր ձկնորսներն իրենց պետը կ'անուանէին, մէկ ոստումով մակոյկը ցատքած էր: Երկար թեւակ մըն էր առած որ իր և զէկ պիտի ծառայէր իրեն:

—Չո՛ւ, մըմնջեց խեղճ աղջիկը, որուն աղաղակները կը խեղդուէին բերանակապէն:

Սոսկումով ծանցած էր Պաթէօն տ'Օռ փողոցին մտավաճառը:

—Այո՛, Չո՛ւ, պատասխանեց սա՛ աղախինին վրայ ծռելով, անոր սոսկումը սաստկացնելու համար. Չու, որ տիրուհիդ մատնութեանը հետևանքով մարդասպան եղաւ. Չու, կարմիր-Մամուկը, որ իր չարչարանքներուն վրէժը պիտի լուծէ քեանէ, ինչպէս արդէն լուծեց Սօլ-Պրօտէէն:

Եւ ոտքովը բիրտօրէն հրելով խեղճ աղջիկը, կըտրուէ հրաման մը տուաւ: Քսան ծովահենները ծնեցան իրենց թիւակներուն վրայ և մակոյկը մէկ վայրկեանի մէջ հասաւ գետին մեծ բազուկը:

Վուսինն ելած էր. իր տփույն ցոլբերուն տակ, քստմնելի մակոյկը քստմնելի երևոյթ մը կ'առնէր: Խելաց կողմը կեցած, Չու՛ անոր չար ոգին էր կարծես: Ամեն անգամ որ իր քսան նաւաստիները ջուրէն դուրս կը հանէին իրենց կարմիր թիւակները, կարծես արեան անձրև մը կը թափէր գետին մէջ:

Ար նմանէր հսկայական ճիւղողի մը որ ջուրերուն վրայէն կը սահէր :

Շուտով անյայտ եղաւ գիշերուն մութին մէջ, և այլ եւս միայն թիակներուն համաչափ ժխորը լսուեցաւ հեռուէն :

ԺԲ.

Փոխաբային արդարութիւնը

Սակայն տիկին Լիու ինչ ալ մտածէր, քոնկ իշխանը չէր մոռնար զինքը, բայց նախ պարտաւորուած էր կարգի գնել բոլոր այն գործերը որոց լուծումը իր քանդոն դարձին յետաձգուած էր, և գիշերը միայն կարգաց անոր աղերսագիրը :

Այս թուղթին մէջ բերքինս նաւապետը իրողութիւնները կը պարզէր անանկ ճարտար վերլուծումով մը եւ անանկ բանաւոր հետեւութիւններ կը հանէր անկից որ անմիջապէս փոխարքային աչքին զարկաւ ոչ այնքան Սոլ-Պրոտէին եւ անոր վարմիկին անմիջութիւնը, որքան Մէնկի ըրած անբաւական քննութիւնները՝ երեւան հանելու համար ճշմարտութիւնը :

Մարտախոյսը, որ ոճրին թաղերաւայրն այցելած եւ տեղեկութիւն առած էր Լէնկ-Թիէն-Լօէն, արդարեւ կը բացատրէր թէ ինչպէս քսան վկաներ պատրաստ էին երգում ընելու թէ երիտասարդ Ի-Թէ պահ մը իսկ չէր հեռացած վիլային սրահներէն, եւ թէ հրաւիրեալներուն հետ դուրս ելած էր՝ երեկոյթին վերջանալուն միայն :

Գալով Սոլ-Պրոտէի, որուն դէմ դատաւորը արձակած էր սպաննութեան ուղղակի ամբաստանութիւն մը ափիոնի վաճառականին համեմատ, ոչ իսկ պէտք էր մեղսակցութիւն կարծել զայն, վասն զի իր մայրը, ուսկից կը պաշտուէր, ստիպած չէր զինքը որ Լէնկ-Թա-Լանկի հետ ամուսնանայ : Ուրեմն բնաւ չահ չունէր անհետացնելու իր ամուսինը, մանաւանդ զանիկա դեռ չտեսած :

Վերջապէս Ի-Թէի տունէն գտած չէին հարսանեկան սենեակէն դուրսուած նիւթերուն ոչ մէկը, կը շարունակէր Բենքինսի տեղեկագիրը, եւ առանց կենալու սա գաղտնիքին վրայ թէ երիտասարդ կրօնաւորը այնքան հուժկու չէր որ յաղթէր Լէնկին, քանի որ ստոյգ կերեւար այս դժբախտին նախ եւ առաջ թունաւորուիլը ոչ նուազ ահնարեւ էր թէ ոչ պարտէղին աւաղին վրայ դրոշմուած ոտքին հետքերը, ոչ ալ անկողնին բարձերէն մէկուն վրայ գտնուած արիւնոտ ձեռքին դրոշմը, չէին կրնար այս ամբաստանեալէն փաշ գալ, քանի որ այդ

քայլերը երկար ու լայն էին եւ ձեռքը՝ բարձրահասակ մարդու մը ձեռքը :

Արդ Ի-Թէ փափկամարմին էր ու վտիտ, կնոջական ոտքեր ու ձեռքեր ունէր :

Մէնկ պահ մը իսկ չէր մտածած այս հակասութիւններուն վրայ :

Գալով Միի մէհեանին մէջ Ի-Թէի հանգիստան հայր Լէնկի, անշուշտ լոկ պատահական էր : Եթէ երիտասարդը հարուստ վաճառականին ըրած էր այս առաջարկը, որ դատաւորին համար դժուարին կանխամուտածութիւն մըն էր եղած, ընդհակառակն միմիայն բարի զգացումները կ'ապացուցանէր այն անձին զոր այնքան շուտով ոճրագործի փոխած էին :

Գալով քրաքէտին հովհաստին, որ գտնուած էր Լէնկ-Թա-Լանկի դիակին տակէն, նաւապետը կը հաստատէր թէ ասիկա ընդհակառակն անժխտելի ապացոյց մըն էր իր անմեղութեանը, վասն զի այդ փոստ չափազանց պատահականութեան կրօնաւոր ըլլալով հոն, անկորելի էր որ մասնաւոր նպատակի համար չըլլար :

Ինչ որ անփիճելի կերեւար, սա էր թէ մարդասպանը կը ճանչնար Ի-Թէն ինչպէս նաեւ անոր յարաբերութիւնները Սոլ-Պրոտէի մօրը հետ, քանի որ այդքան ճարտարութեամբ արդարութեան ձեռքն յանձնած էր որ սը որով ճշմարիտ ոճրագործը զերծ պիտի մնար կասկածներէ :

(Շարունակելի)

Հրատարակուեցաւ «Այլինէի Լէթայիֆի» ծանցերորդ տետրակն ալ 20 տետրին բաժնեկիւնն է Պուլկարիոյ համար 2 ֆր. արտասահման շուկէս ֆր. կանխիկ

Բարեյիշատակ եղիազար Մուրատեանի հիշնակած «Ֆիննական Պատմութիւն Արշակ Բ.ի և անոր Պապ որդւոյն» անուն երկասիրութիւնը այս անգամ լոյս տեսած է Աղեքսանդրիոյ «Արաքս» շուրահաստատ տպարանէն և կը ծախուի ի գին 2¹/₂ ֆրանք : Պուլկարիոյ և Ռուսիոյ մէջ ստանալ փափագողը գիմելու ևն մեր խմբագրութեան :

Ի. Գ. ՀԻՆՏԼԵԱՆ

ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Պուլկարեան լեզուի

Գին 1 ֆր.

Դիմել Հայելիի խմբագրութեան :

Печатница „Взаимность“ — Варна